սաղէմի՝ յերեկեան գիշերի բերանացի պատմեցի Նորին Բարձրութեան, և նա հրամայեաց գրով մատուցանել զայն ։ Ուստի հարկ եղեւ վերստին կոչել զպատգամաւորն Յունաց եւ հարցանել, ահաւասիկ բանք նորին ։ Դատաւորն Երուսաղէմի սակս գործադրելոյ զհրովարտակն Արքայի՝ խնդրեաց 'ի մէնջ 100,000 դահեկան, թէպէտ և յօժարեցաք տալ նմա 20,000 կանխիկ, և 10,000 փոխանակագրով հատուցանել 'ի Կոստանդինուպօլիս, այլ նա ոչ կամեցաւ, և խնդիրն մնաց 'ի վիճակի իւրում ։ Իսկ Հայք համարձակութիւն առեալ յընթացից Դատաւորին, անցեալ զանցին քան զչափն, զի ընդդէմ նախնական սովորութեան բացին դրունս յեկեղեցին Բեթղեհէմի եւ զարդարեցին պէսպէս պատկերօք, և 'ի թոյլ տալոյ Դատաւորին՝ նորոգեցին զեկեղեցին Համբարձման, և յանդգնեցան առնել զքանի մի աւելորդ իրս, մինչ զեկեղեցին անգամ նորոգելոյ չունէին հրաման, այժմ շինեալ հաստատեցին մի նոր վանք, և գրաւեցին զբանալի տեղւոյն, որ յատկացեալ էր Հայոց, Յունաց և Լատինաց ։ Եւ 'ի հրամանագիրս Փոխարքային յայտնապէս յիշեալ է լեառն Ձիթենեաց, և ջնջումն երից հրովարտակացն Հայոց, և այս կարծիս տուեալ է · այսոքիկ են բանք պատգամաւորին ։ Յետ ճանաչելոյ մեծութեան ձերում զեղանակ գործոյն, հաճեցէք մատուցանել յատս Նորին Բարձրութեան ։ Արդ՝ խնդրեմք զպատիժ Դատաւորին, զմերժումըն Հայոց 'ի տեղեացն այնոցիկ, յորս չունին իրաւունս, և զհաստատութիւն իրաւանցն Յունաց ։ Եւ որպէս զի մի յանդգնեսցին միւսանգամ յայսպիսի խնդիրս, կարգեսցի Ոստիկան 'ի քննութիւն դատին, և 'ի նկատի ունել զօրէգիս, որք կարօտ են շինութեան, և յայտնել զճշմարտութիւն իրին, զի վախճան լիցի այսպիսի վիճմանց և խօսակցութեանց, խոնարհ աղերսանօք և յարգանօք ծանուցանեմ Նորին Բարձրութեան, 'ի ١ Շէվվալ ամսոյ ١٢٥٣ »։ Պատճէն նամակի Փոխարքային գրեալ առ Գաւառապետն ։

Զթարգմանութիւն նամակի Ռուսիոյ տէրութեան ընդհանուր Հիւպատոս Գունիէմում բարեկամին մերոյ, ուղղեալ առ Թարգման Պէյն, սակս Դատաւորին Երուսաղէմի, եւ զպատճէն Կայսերական հրովարտակին ծրարեալ 'ի ծոց հրամանագրոյս առաքեցի առ ձեզ, զի ընթերցեալ բարւոք